Հավելված
ՀՀ կառավարության 2018 թվականի
նոյեմբերի 8-ի N 1246 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄՆԻՆ ՀԱՆՁՆՎԱԾ (ԱՄՐԱՑՎԱԾ) ԳՈՒՅՔԸ ՀԱՇՎԵԿՇՌՈՒՄ ՀԱՇՎԱՌԵԼՈՒ

1. Սույն կարգով կարգավորվում են պետական մարմնին հանձնված (ամրացված) գույքը պետական մարմնի հաշվեկշռում (ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում) հաշվառելու հետ կապված հարաբերությունները:

2. Պետական մարմնի գույքը ձևավորվում է օրենսդրությամբ սահմանված կարգով նրա տիրապետմանն ու օգտագործմանը հանձնված (ամրացված) գույքից:

3. Պետական մարմնին հանձնվող գույքի կազմը և չափը որոշում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Հանձնվող գույքն օգտագործվում է իր նպատակային նշանակությանը համապատասխան: Եթե հանձնվող գույքը պետք է օգտագործվի ոչ իր նպատակային նշանակությամբ, ապա գույքը հանձնելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանվում է նաև հանձնվող գույքի օգտագործման և տիրապետման կարգը:

4. Պետական մարմնին գույքը հանձնվում է հանձնման-ընդունման ակտին համապատասխան:

5. Պետական մարմնին հանձնված գույքի հաշվապահական հաշվառումն իրականացվում է «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պահանջներին համապատասխան:

6. Պետական մարմնին հանձնված (ամրացված) գույքի ներքին հաշվառման կարգը սահմանում է համապատասխան պետական մարմնի ղեկավարը, իսկ Հայաստանի Հանրապետության նախագահի աշխատակազմում և Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմում՝ նախագահի աշխատակազմի և վարչապետի աշխատակազմի ղեկավարները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ